ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
18 ապրիլի 2025 թվական, N 64-Ա

«ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 28-րդ կետերով, 81-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 2-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հիմնադրման միջոցով ստեղծել «ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն):
2. Հաստատել Ընկերության կանոնադրական կապիտալը՝ 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, որը համապատասխանում է 100 հատ հասարակ բաժնետոմսի՝ յուրաքանչյուրը 10 000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով: Ընկերության բոլոր բաժնետոմսերը պատկանում են Ալավերդի համայնքին:
3. Հաստատել Ընկերության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
4. Հաստատել Ընկերության հաստիքացուցակը՝ համաձայն N 2 հավելվածի:
5. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Ընկերության կանոնադրության պետական գրանցումը:

ԿՈՂՄ (17) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ
ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ
ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ
ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ
ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ

ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ
ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ
ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ
ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ՍԻՄՈՆ	ՋԱԽԱՐՈՎ
ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ
ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ
ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ., ապրիլի 18,
Լոռու մարզ, ք. Ալավերդի